ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N6
ՔՋԲԿ-ԳՀԱՊՁԲ-ՊԱՐ-20/5 գնանշման հարցման ընթացակարգի գնահատող
հանձնաժողովի արտահերթ նիստի

ք.Երևան

07.07.2020թ
ժամը 12:00

Մասնակցում էին`
Հանձնաժողովի նախագահ` Մ. Մկրտչյան
Հանձնաժողովի անդամներ` Մ. Շահնազարյան
Լ. Կիրակոսյան
Ռ. Նալբանդյան
Հանձնաժողովի քարտուղար` Է. Գրիգորյան

## 1. <u>Հանձնաժողովի նիստի օրակարգը</u>
**/ Մ. Մկրտչյան /**

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին,
2. ՔՋԲԿ-ԳՀԱՊՁԲ-ՊԱՐ-20/5 ընթացակարգի 58 չափաբաժնի մասով բանակցությունների կազմակերպման մասին
3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

***Ընդունվել է որոշում` կողմ` 4, դեմ`0***

## 2. ՔՋԲԿ-ԳՀԱՊՁԲ-ՊԱՐ-20/5 ընթացակարգի 58 չափաբաժնի մասով բանակցությունների կազմակերպման մասին
**/ Մ. Մկրտչյան /**

ՔՋԲԿ-ԳՀԱՊՁԲ-ՊԱՐ-20/5 ընթացակարգի 58 չափաբաժնի համար գնային առաջարկ է ներկայացրել ,,Մեդտեխսերվիս՛՛ ՍՊԸ-ն՝ առաջարկելով 264 000 դրամ, որը գերազանցում է տվյալ չափաբաժնի համար նախատեսված ֆինանսական միջոցները, սակայն տեխնիկական վրիպակի պատճառով 264 000 դրամի փոխարեն գնահատման նիստի արձանագրության մեջ տպագրվել է 26 400 դրամ, և տվյալ մասնակիցը հայտարարվել է որպես հաղթող:

Քանի որ տեղի է ունեցել տեխնիկական սխալ, տվյալ չափաբաժնի մասով բանակցություն տեղի չի ունեցել, ուստի ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 40-րդ կետի 5-րդ մասի համաձայն վերը նշված չափաբաժնի համար հաղթողին որոշելու նպատակով կասեցնել հայտերի բացման և գնահատման նիստը և առաջարկված գների նվազեցման շուրջ ոչ գնային պայմանները բավարարող գնահատված մասնակիցների հետ միաժամանակյա բանակցություններ վարելու նպատակով, նիստ հրավիրել 10.07.2020թ-ին ժամը 15:00-ին, բանակցությունների վարման համար ժամանակ սահմանել 15 րոպե:

***Ընդունվել է որոշում` կողմ` 4, դեմ`0***

3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին
/ Մ. Մկրտչյան /

Ելնելով աշխատանքային անհրաժեշտությունից՝ գնահատող հանձնաժողովը որոշեց կասեցնել հայտերի բացման և գնահատման նիստը , և հաջորդ նիստը հրավիրել 10.07.2020թ. ժամը 15:00 <<Քանաքեռ-Զեյթուն>> ԲԿ ՓԲԸ շենքում՝ ք.Երևան Հ.Ներսիսյան 7 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0

Նախագահ՝ Մ. Մկրտչյան

Անդամներ՝ Մ. Շահնազարյան

Լ. Կիրակոսյան

Ռ. Նալբանդյան

Հանձնաժողովի քարտուղար Է. Գրիգորյան